

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2017 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը 2017 թվականի ընթացքում իրականացրել է բաժնի կանոնադրությամբ իրեն վերապահված հետևյալ գործառույթները.

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության մարզպետի կողմից հաստատված «Քաղաքացիների ընդունելության» կարգով սահմանված դրույթներին համապատասխան՝ 2017թ. ընթացքում մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը կայացել է ըստ ժամանակացույցի՝ յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրերին, իսկ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա հինգշաբթի օրերին՝ Ապարանի, Թալինի, Արագածի տարածաշրջանների համայնքներում: Ընդհանուր առմամբ կայացել է քաղաքացիների 65 ընդունելություն, որից 16-ը՝ տարածաշրջանների համայնքներում: Ընդունելություններին, ընդհանուր առմամբ, մասնակցել է 1155 քաղաքացի:

Մարզպետարանի պաշտոնական կայքի՝ **Քաղաքացիների ընդունելություն** բաժնում տեղադրված են ընդունելության կարգը, ժամկետները, մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված քաղաքացիների ցուցակները և ընդունելության արդյունքների մասին ողջ տեղեկատվությունը:

ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից 2017 թվականին կազմակերպվել է 2 ասուլիս: Առաջինը կայացել է հունվարի 26-ին, երկրորդը՝ սեպտեմբերի 29-ին: Ասուլիսները լուսաբանվել են մարզպետարանի aragatsotn.mtad.am պաշտոնական կայքում, «Հայաստանի Հանրապետություն» հանրապետական օրաթերթում, մարզային «Կանթեղ», «Արագած աշխարհ», «Թալին աշխարհ», «Դարձ» թերթերում, yerkir.am էլեկտրոնային թերթում և Երկիրմեդիա հեռուստատեսությամբ:

2017 թվականի ընթացքում լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից, անհատ անձանցից ստացվել է 27 գրավոր հարցում: Բոլոր հարցումներին էլ, այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստացվածներին, սահմանված

ժամկետում տրվել է բավարար պատասխան: Օրենքի շրջանակում պատասխաններ են տրվել նաև բոլոր բանավոր հարցումներին: Գրավոր հարցումներն ու դրանց տրված պատասխանները տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքի **Դիմեք մեզ եւ տեղեկատվական ազատություն** բաժնի **Տեղեկատվություն գրավոր հարցումների մասին** ենթաբաժնում:

Մարզպետարանի aragatsotn.mtad.am կայքում բացվել է **Առցանց հեռարձակում** բաժինը եւ յուրօրյան էջը:

2017 թվականի ընթացքում մարզպետի, մարզպետարանի այլ պաշտոնատար անձանց, կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին պատրաստվել են մամլո հաղորդագրություններ, տեղեկատվական տեղեկանքներ և հաշվետվություններ:

Պետական կառավարման կառույցների, նախարարությունների հետ համագործակցությունը բաժինն իրականացրել է համապատասխան տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների, մամլո ծառայությունների միջոցով:

Լուսաբանվել են քաղաքաշինության, ճանապարհաշինության, կրթության, առողջապահության, համայնքային ծառայության ոլորտներում իրականացվող աշխատանքները, հորեյանական տոնակատարություններին, հանդիսություններին նվիրված միջոցառումները: Օպերատիվ լրատվություն է ապահովվել մարզպետի, մարզպետի տեղակալների, աշխատակազմի ղեկավարի մոտ և վարչություններում տեղի ունեցած խորհրդակցությունների, քաղաքացիների ընդունելությունների վերաբերյալ, ապահովվել է դրանց լուսաբանումը մարզպետարանի կայքում և մամուլում:

Ընդհանուր առմամբ, տպագրության են պատրաստվել շուրջ 200 լուր, վերլուծական հոդվածներ, հարցազրույցներ: Դրանք տպագրվել են հանրապետական և մարզային զանգվածային լրատվամիջոցներում, տեղադրվել են մարզպետարանի ինտերնետային էջում: Համագործակցություն է եղել հանրային հեռուստատեսության տարբեր ծրագրերի հետ: Լույս են տեսել հետևյալ թերթերը՝ «Կանթեղ»-8, «Արագած աշխարհ»-20, «Թալին աշխարհ»-12, «Դարձ» - 12 համար:

Պատրաստվել են պարտադիր հրապարակման ենթակա նյութերը, որոնց մեջ ընդգրկվել են մարզպետարանի հաստիքացուցակը և պաշտոնատար անձանց տվյալները, հեռախոսահամարները, աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը, բյուջեն, գրավոր հարցումների ձևերը, քաղաքացիների ընդունելության կարգը և այլն:

Արագածոտնի մարզխորհրդի նիստերը լուսաբանվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից կազմված մեթոդաբանության համաձայն: Նիստերի օրակարգի և կայացման մասին տեղեկատվությունը սահմանված կարգի համաձայն ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, լուսաբանվել է մարզպետարանի aragatsotn.mtad.am կայքի **Նորություններ** բաժնում, նիստերի օրակարգերն ու արձանագրությունները տեղադրվել են **Մարզպետարան** բաժնի **Մարզխորհրդի նիստեր** ենթաբաժնում, փակցվել մարզպետարանի Տեղեկատվական տախտակում: Այդ մասին ժամանակին իրազեկվել են մարզային, հանրապետական լրատվամիջոցները:

Մարզպետարանի aragatsotn.mtad.am կայքի **Ծրագրեր և գերակա խնդիրներ** և **Մարզպետարան** բաժնիններում տեղադրված են ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, 2017-2025թթ. զարգացման ռազմավարության ծրագիրը, մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային տարեկան ծրագիրը, մարզպետի և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները:

Կայքի **Իրավական ակտեր** բաժնում տեղադրվել և փաստաթղթերի հաստատումից հետո մեկ շաբաթվա ընթացքում թարմացվել են մարզպետի բոլոր որոշումներն ու կարգադրությունները, աշխատակազմի ղեկավարի հրամանները: Համայնքներն, ընդհանուր առմամբ, ունեն տեղեկատվական ցուցատախտակներ, ուր հիմնականում համայնքապետարանի գործունեությանը վերաբերող հայտարարություններից բացի տեղադրվում են ավագանիների և համայնքապետի որոշումները:

Կայքի **Համայնքներ** բաժնի **Համայնքի ավագանու որոշումներ**, **Համայնքի ղեկավարի որոշումներ**, **Հաշվետվություններ**, **Համայնքների բյուջեներ** ենթաբաժնիններում ներկայացված են համայնքապետարանների գործունեությունը, համայնքապետերի, ավագանիների նիստերի որոշումները, եռամսյակը մեկ անգամ նրանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, ինչպես նաև՝ մարզի և համայնքների բյուջեների կատարման ընթացքը: